ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 նոյեմբերի 2025 թվականի N 1548 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N 575-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 15-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՊՐՈՄ ՍԻՆԹԵԶ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 575-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետի «Անվանումը» սյունակում «Պոլիմերային հումք ABS AF 345» բառերը փոխարինել «Պոլիմերային հումք Ակրիլնիտրիլբութադեինստիրոլ ABS» բառերով.

2) 2-րդ կետի «Անվանումը» սյունակում «Պոլիէթիլենային հումք HDPE CRP100» բառերը փոխարինել «Պոլիմերային հումք ARM CRP100B, HDPE CRP100N, HDPE-HMCR100N, HDPE HMCRP100Natural, HDPE CRP 100Black, HDPE PE100, HDPE PE100 Black, HDPE PE100Natural» բառերով.

3) 3-րդ կետի «Անվանումը» սյունակում «Պոլիպրոպիլեն HDPE CRP100» բառերը փոխարինել «Պոլիպրոպիլեն PP» բառերով.

4) 3-րդ կետի «ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը» սյունակում «3901209009» թվերը փոխարինել «3902100000» թվերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ